ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Հովհաննիսյանի և Էլինար Վարդանյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-064-31.08.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

1. Կարևորելով փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում ՓՄՁ-ի պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ, նաև պետական աջակցության ոլորտը

կարգավորելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Մասնավորապես, 2000 թվականի դեկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին» արձանագրային որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 19-ի «Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ ստեղծելու մասին» N 282 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 1790-Ն որոշմամբ: Ավելին, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2011 թվականի հուլիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ ստեղծելու, դրա կազմն ու աշխատակարգը հաստատելու մասին» N 638-Ն որոշմամբ ստեղծվել է Հայաստանի Հանրապետության փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խորհուրդ, որը պետական մարմիններին փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործարար միջավայրի զարգացման հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով գործարար համայնքի հետ համատեղ իրականացնում է համապատասխան միջոցառումներ: Բացի դրանից՝ ՓՄՁ-ի սուբյեկտների աշխատողների հաշվապահական և հարկային ունակությունների զարգացման, մասնավորապես, սուբյեկտների մոտ հաշվապահական հաշվառման, հարկային հաշվետվությունների կազմման, ինչպես նաև հարկային համակարգին առնչվող այլ հարցերի ուղղությամբ առաջացող խնդիրների լուծմանը նպաստելու նպատակով 2009 թվականին հիմնադրվեց ՓՄՁ-ի սուբյեկտների

համար հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման կենտրոն, որի կառավարումն իրականացնում է Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիան: Ընդ որում, հաշվապահական կենտրոնում մրցութային կարգով ընդգրկված հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում մասնագիտացված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպությունների (ԳԾՄԿ-ներ) միջոցով մատուցվում են հաշվապահական հաշվառման վարման և հարկային հաշվետվությունների կազմման ուղղությամբ ծառայություններ՝ ըստ հաստատված միասնական գնացուցակի:

Տեղին է նշել, որ Հայաստանում ՓՄՁ-ի պետական աջակցության առավել նպատակային իրականացման, ՓՄՁ-ի ոլորտին առնչվող վիճակագրության վարման գործընթացների պարզեցման ու կատարելագործման, ինչպես նաև Եվրամիության չափանիշներին մոտարկման և ՓՄՁ-ի ոլորտը բնութագրող ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության նախաձեռնությամբ 2010 թվականի հոկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որն ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

Ներկայացված օրենքի նախագծում ներառված են ՓՄՁ-ի սուբյեկտների դասակարգման չափորոշիչներին, դրանց տարբերակող սահմանային հատկանիշներին (թվաքանակային և ֆինանսական), ՓՄՁ-ի ոլորտի զարգացման նորմատիվ-իրավական կարգավորման առանձնահատկություններին, աջակցության ենթակառուցվածքներին, ուղղություններին և սկզբունքներին վերաբերող դրույթներ: Հարկ է նկատի ունենալ, որ նշված իրավական ակտերով արդեն իսկ կարգավորված են ՓՄՁ-ի աջակցության միաս-

նական չափորոշիչները, ֆինանսավորման աղբյուրները, ՓՄՁ-ի ոլորտի հիմնական նպատակներն ու քաղաքականությունը, սկզբունքները, ՓՄՁ-ի աջակցության ենթակառուցվածքները: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովելու միասնական քաղաքականության իրականացում: Ներկայումս էլ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող ՓՄՁ-ի պետական աջակցության ծրագրերում հիմք են ընդունվում գործող օրենքով նախատեսված աջակցության ուղղություններն ու սկզբունքները:

2. Օրենքի նախագծում ներկայացված ՓՄՁ-ի սուբյեկտների պետական աջակցության հիմնական ուղղություններին առնչվող դրույթներն արտացոլում են Հայաստանում մասնավոր հատվածի, մասնավորապես, ՓՄՁ-ի զարգացման մարտահրավերները: Հայաստանի Հանրապետության կառավարությունն առավել նպատակահարմար է համարում, որ դրանք ներկայացված լինեն ռազմավարական (հայեցակարգային) բնույթի փաստաթղթերում, քանի որ ՓՄՁ-ի պետական աջակցությունը դինամիկ գործընթաց է, որը պարբերաբար ձևափոխվում և ստանում է նոր բովանդակություն՝ երկրում տեղի ունեցող տնտեսական, սոցիալական և քաղաքական զարգացումներին (փոփոխություններին) զուգընթաց, իսկ ՓՄՁ-ի պետական աջակցության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած այս ձևաչափը հնարավորություն է ընձեռում տարբեր մակարդակներում ավելի ճկուն և իրատեսական լինել՝ աջակցության գործիքակազմը ձևավորելու և առկա ռեսուրսները վերաբաշխելու առումով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը մշակում է ՓՄՁ-ի ոլորտի զարգացման նոր ռազմավարություն (հայեցակարգ): Օրենքի նախագծում ներկայացված նշված դրույթները նպատակահարմար է դիտարկել ՓՄՁ-ի ոլորտի զարգացման ռազմավարության (հայեցակարգի) համատեքստում:

3. Նախագծում տարանջատված են ՓՄՁ-ի պետական աջակցության բնագավառում պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, ինչպես նաև նախատեսված են նրանց կողմից ՓՄՁ-ի զարգացման պետական և տարածքային ծրագրերի իրականացմանն ու վերջիններիս կողմից ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվող աջակցության սկզբունքներին ու գրանցամատյաններ վարելուն վերաբերվող դրույթներ:

Հարկ է նկատի ունենալ, որ թե պետական, և թե տարածքային կառավարման մարմինները պետական կառավարման մարմիններ են և նրանց գործունեության տարանջատումը ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ոլորտում նպատակահարմար չէ: Նախատեսված ծրագրերի տարանջատումն արհեստական է: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից պետք է իրականացվի միասնական ՓՄՁ-ի զարգացման քաղաքականություն: Ներկայումս, ըստ առանձին ուղղությունների ու ոլորտների, ՓՄՁ-ի պետական աջակցության կոնկրետ մեխանիզմները կիրարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվող ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերում, ինչպես նաև տարածքային կառավարման մարմինների կողմից մշակվող և իրականացվող կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում:

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՓՄՁ-ի սուբյեկտներին ցուցաբերվող աջակցությանը, ապա հարկ է նկատի ունենալ, որ վերջիններս, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, նման իրավասություն ունեն, իսկ կապված համայնքի կարողությունից ու մի շարք այլ գործոններից՝ ՓՄՁ-ի աջակցության մեխանիզմները յուրաքանչյուր համայնքում կարող են ունենալ իրենց առանձնահատկությունները:

4. Նախագծում ներկայացված ՓՄՁ-ի աջակցության պետական ծրագրերի ֆինանսավորման շեմը տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 0.5 տոկոսի չափով սահմանելու վերաբերյալ դրույթը ներկայումս ընդունելի չէ, քանի որ յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում որևէ ծրագրի գծով հատկացումների նախատեսման հարցի քննարկման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները, թե որքանով է նշված ծրագիրը բխում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունից, արդյոք այն այդ քաղաքականության գերակայություններից է, որոնք են այդ ծրագրի իրականացման իրավական հիմքերը, որքանով է հիմնավորված և հաշվարկված այն, ինչպիսին են այդ ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները և այլն: Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման ժամանակ շատ էական են նախագծում բյուջետային ելքերի կառուցվածքի և ծավալների ձևավորման վրա անմիջականորեն ազդող՝ տվյալ տարվա համար կանխատեսվող մակրոտնտեսական և բյուջետային շրջանակների ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը պետք է ուղղված լինի երկրում առկա հիմնախնդիրների լուծմանը և այդ տեսանկյունից, հաշվի առնելով նշված մոտեցումները, առանձին ոլորտների գծով տարբեր օրենքներով բյուջետային ծախսերի նվազագույն շեմերի սահմանմաբ և դրանով իսկ տվյալ տարվա բյուջետային ծախսերի կառուցվածքի կանխորոշմամբ հնարավոր չէ ապահովել տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի կառուցվածքի արդյունավետությունը:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի 0.5%-ը մոտավորապես կազմում է տարեկան 5 մլրդ դրամ գումար, իսկ

2007-2011 թվականներին ՓՄՁ-ի զարգացմանն ուղղված քաղաքականության շրջանակներում ուղղակի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և այլ ռեսուրսներից ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրված աջակցության գումարը կազմում է շուրջ 97.5 մլրդ դրամ, մասնավորապես՝

Տարեկան ծրագրերի շրջանակներում՝ 1,7 մլրդ,

«ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի միջոցով տրամադրվող աջակցություն՝ 7.5 մլրդ դրամ,

Ռուսական վարկի շրջանակում 122 մլրդ դրամ ֆինանսավորում՝ տնտեսության կայունացման նպատակով, որից՝ ՓՄՁ-ներին՝ ավելի քան 80 մլրդ դրամ,

ՀԲ-ի ռեսուրսներից ՓՄՁ-ներին ուղղվել է 6.5 մլրդ դրամ,

ՖՐԵԴԱ-ի միջոցով տրամադրվող աջակցություն՝ շուրջ 1.7 մլրդ դրամ:

Նշված գումարներն ուղղվել են ուղղակի վարկավորմանը, սեփական կապիտալի ֆինանսավորմանը և աջակցության այլ ուղղությունների: Հաշվի առնելով, որ այդ գումարները հիմնականում շրջանառվող ռեսուրսներ են, տրամադրված աջակցության չափն ավելի մեծ է: Ուստի նշվածը նույնպես հիմնավորում է, որ բյուջեի ծախսային մասի 0.5 %-ի չափն օրենքով ֆիքսելը նպատակահարմար չէ, քանի որ խախտում է բյուջեի կազմման և ծախսերի առաջնահերթությունների որոշման՝ Հայաստանի Հանրապետությունում կիրառվող սկզբունքները: Այսինքն, այդ ցուցանիշները կարող են լինել ուղենշային, այլ ոչ թե պարտադիր:

5. Օրենքի նախագծում մասամբ պահպանված չեն օրենսդրական տեխնիկայի կանոնները և առկա են իրավական ակտերով կարգավորված, հստակեցման ու պարզաբանման կարիք ունեցող մի շարք դրույթներ, մասնավորապես՝

1) հստակեցման կարիք ունի տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարվող գրանցամատյանների էությունը և այն, թե

ի՞նչ իրավական ակտով է սահմանվելու դրանց վարման կարգը: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նշված մարմիններին համապատասխան լիազորություններ վերապահված չեն: Բացի դրանից՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքն իրականացնում է որպես կամավոր լիազորություններ: Դրա հետ մեկտեղ տեղական ինքնակառավարման մարմիններն ինքնուրույն են որոշում իրենց բյուջեների միջոցների բաշխումը՝ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջի: «ՓՄՁ սուբյեկտների … մարքեթինգային և այլ մեթոդական բնույթի աջակցության կազմակերպման, ինչպես նաև արտահանման կարողությունների ավելացման ապահովման» համատեքստում տեղական ինքնակառավարման մարմինները չունեն նման լիազորություններ.

2) հստակեցման կարիք ունի այն, թե «ծրագրի իրականացման նշանակալի մասը» ի՞նչ չափորոշիչներով է որոշվելու, որով պայմանավորված կլինեն Հայաստանի Հանրապետության մարզերում ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ձևերի ու եղանակների ծավալները.

3) պարզաբանման և հստակեցման կարիք ունեն «գործունեությունից ստացված հասույթ», «գյուղացիական ֆերմերային տնտեսություն» և «պետական իշխանության մարմիններ» արտահայտությունները:

Հարկ է նշել, որ օրենքի նախագծով ՓՄՁ-ի սուբյեկտների նկատմամբ կիրառվող մոտեցումները, աջակցության մեխանիզմները և ուղղությունները չեն փոփոխվել, ուստի անհասկանալի է նոր օրենքի ընդունման անհրաժեշտությունը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում օրենքի նախագծի ընդունումը, քանզի տնտեսական

զարգացման ներկա փուլում առկա են ձեռնարկատիրական գործունեության, մասնավորապես, ՓՄՁ-ի զարգացման և պետական աջակցության իրավաօրենսդրական կարգավորման բոլոր նախադրյալները:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արա Պետրոսյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) նախագծի ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն չի նախատեսվում:

Նախագիծը վերաբերում է փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ոլորտին, որն արդեն իսկ կարգավորվում է ՀՀ գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ 2000 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված «Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանում փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթների մասին» արձանագրային որոշմամբ, ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 19-ի «Հայաստանի փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ ստեղծելու մասին» N282 որոշմամբ, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին աջակցության 2012 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N1790-Ն որոշմամբ: Ուստի առաջարկվող Նախագիծը անհարկի կավելացնի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում արդեն իսկ գործող իրավական կարգավորումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

Եզրակացություն

<<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

<<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն**,

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

<<Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և պետական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատականի կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի մուտքերի վրա ազդեցություն չի առաջացնում, Սակայն ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով Նախագծի ընդունումը կհանգեցնի լրացուցիչ ծախսերի էական ավելացման:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-064-31.08.2012-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի նպատակը եւ կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակն է սահմանել փոքր եւ միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) սուբյեկտների չափորոշիչները, փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման եւ պետական աջակցության հիմնական ուղղությունները եւ այդ ոլորտում պետական քաղաքականության իրականացման սկզբունքները:

ՓՄՁ ոլորտում հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով եւ իրավական ակտերով:

2. Սույն օրենքը կարգավորում է այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են պետական ու տարածքային կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիների եւ իրավաբանական անձանց միջեւ՝ կապված ՓՄՁ զարգացման եւ պետական աջակցության հետ:

Սահմանում եւ դասակարգում է ՓՄՁ սուբյեկտները, նրանց տարբերակող սահմանային հատկանիշները, ՓՄՁ զարգացման եւ պետական աջակցության հիմնական ուղղությունները, սկզբունքները ու նպատակները, ինչպես նաեւ պետական աջակցության ձեւերն ու տեսակները:

3. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում վարկային, ապահովագրական եւ ներդրումային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի, ներդրումային ֆոնդի կառավարիչների, գրավատների, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների, խաղատների եւ շահումով խաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող սուբյեկտների, ինչպես նաեւ դուստր եւ կախյալ տնտեսական ընկերությունների վրա:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

1. Փոքր (այդ թվում՝ նաեւ գերփոքր) եւ միջին ձեռնարկատիրության սուբյեկտներ՝ սույն օրենքով սահմանված սուբյեկտային հատկանիշներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներ՝ իրավաբանական անձինք, կամ անհատ ձեռնարկատերեր, կամ առանց իրավաբանական անձ կազմավորելու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու օրենքով ամրագրված իրավունք ունեցող սուբյեկտներ (գյուղացիական ֆերմերային տնտեսությունները, մասնավոր օժանդակ տնտեսություն վարող անձինք):

2. Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացման պետական ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նորմատիվ իրավական ակտեր, որոնցում սահմանվում են այն միջոցառումների ցանկերը, որոնք ուղղված են ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության իրականացմանը՝ դրանց ֆինանսավորման աղբյուրներին ու չափին, նշված միջոցառումների իրականացման համար պատասխանատու գործադիր իշխանության մարմինները, իրականացման ժամկետները եւ գործունեության արդյունավետության ապահովման այլ միջոցառումների մասին նորմատիվները:

3. Փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցություն (այսուհետ՝աջակցություն)՝ պետական կառավարման մարմինների եւ համապատասխան ենթակառուցվածքների՝ ՓՄՁ զարգացման պետական ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացմանը ուղղված գործունեություն:

4. Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացման տարածքային ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտեր, որոնցում սահմանվում են այն միջոցառումների ցանկերը եւ ժամանակացույցը, որոնք ուղղված են ՓՄՁ զարգացման պետական քաղաքականության իրականացմանը համապատասխան մարզի վարչական տարածքում, իրականացվող միջոցառումների ֆինանսավորման աղբյուրներն ու չափը, դրանց արդյունավետության ապահովման այլ անհրաժեշտ իրավական եւ նորմատիվ մեխանիզմներ:

Հոդված 3. ՓՄՁ սուբյեկտները

1. Հայաստանի Հանրապետությունում ՓՄՁ սուբյեկտները դասակարգվում են՝

1) գերփոքր՝ առեւտրային կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչեւ 10 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 100 մլն դրամը.

2) փոքր՝ առեւտրային կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչեւ 50 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում 500 մլն դրամը.

3)միջին՝ առեւտրային կազմակերպություններ եւ անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը կազմում է մինչեւ 250 մարդ, իսկ նախորդ տարվա գործունեությունից ստացված հասույթը կամ նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը չեն գերազանցում համապատասխանաբար 1500 մլն դրամը եւ 1000 մլն դրամը:

2. Նոր ստեղծված կազմակերպությունները կամ նոր գրանցված անհատ ձեռնարկատերերը գրանցվում են որպես ՓՄՁ սուբյեկտ, եթե պետական գրանցման օրվանից մինչեւ ՓՄՁ աջակցության նպատակով տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից վարվող գրանցամատյանում գրանցվելու օրը անցած ժամանակահատվածում նրանց ցուցանիշները չեն գերազանցում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանային ցուցանիշները:

Հոդված 4. Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները

ՓՄՁ զարգացմանն ուղղված պետական քաղաքականության հիմնական նպատակներն են.

1. համախառն ներքին արդյունքի ծավալում ՓՄՁ սուբյեկտների արտադրած ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բաժնեմասի ավելացումը.

2. ՓՄՁ հարկային եւ մաքսային հարաբերությունների կատարելագործումը.

3. արտահանման կառուցվածքում ՓՄՁ կողմից թողարկված արտադրանքի կամ ծառայությունների մասնաբաժնի մեծացումը.

4. ՓՄՁ սուբյեկտների մրցունակության ապահովումը.

5. բնակչության զբաղվածության ապահովումը եւ ինքնազբաղվածության զարգացումը.

6. ՓՄՁ սուբյեկտների հարաբերություններում հավասար մրցակցային պայմանների ապահովումը.

7. ՓՄՁ սուբյեկտների զարգացման համար բարենպաստ պայմանների ապահովումը, այդ թվում՝ ֆինանսական (վարկային) միջոցների մատչելիության, ներքին սպառողական շուկայի կարգավորման, արտահանման ողջամիտ հնարավորության եւ այլ անհրաժեշտ պայմանների ընձեռմամբ:

Հոդված 5. ՓՄՁ պետական աջակցության հիմնական ուղղությունները

ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղություններն են՝

1. բարենպաստ իրավական դաշտի ձեւավորումը,

2. ֆինանսական եւ ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը,

3. աջակցող ենթակառուցվածքների ստեղծումը եւ զարգացումը,

4. տեղեկատվական եւ խորհրդատվական աջակցությունը,

5. արտաքին տնտեսական գործունեության խթանումը,

6. նորարարական գործունեության եւ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությունը,

7. բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը,

8. կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը,

9. վիճակագրական հաշվետվությունների եւ հաշվապահական հաշվառման պարզեցված համակարգերի ստեղծումը,

10. պետական գնումների իրականացման գործընթացում աջակցությունը:

Հոդված 6. ՓՄՁ աջակցության պետական ծրագիրը

ՓՄՁ պետական աջակցությունը իրականացվում է տարեկան ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրը յուրաքանչյուր տարվա համար մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծրագիրը մշակվում է սույն օրենքով սահմանված հիմնական ուղղություններին համապատասխան՝ ելնելով տվյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գերակայություններից: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը նշվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում առանձին տողով:

Ֆինանսավորման շեմը սահմանվում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 0,5 տոկոսի չափով:

Ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացվում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության հետ:

Ծրագրում սահմանվում են նորարարական գործունեության եւ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման, արտահանմանը միտված ապրանքներ արտադրող եւ ծառայություններ մատուցող ՓՄՁ սուբյեկտների աջակցության ձեւերն ու ուղղությունները հանրապետության տնտեսության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գերակա հռչակված ճյուղերում ՓՄՁ սուբյեկտների պետական օժանդակության պայմանները եւ ուղիները:

Հոդված 7. ՓՄՁ-ի աջակցության պետական ծրագրի իրականացման սկզբունքները

Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ՓՄՁ Զարգացման ազգային կենտրոնի (ՁԱԿ) եւ Ծրագրով նախատեսված ՓՄՁ-ին աջակցող այլ կառույցների միջոցով.

2. Ծրագրի իրականացման շրջանակներում նախապատվությունը տրվում է արտադրության ոլորտում գործող, նորարարություններ եւ ժամանակակից տեխնոլոգիաներ կիրառող, հեռանկարային եւ արտահանման ներուժ ունեցող ՓՄՁ սուբյեկտներին, ինչպես նաեւ սկսնակ գործարարներին.

3. Ծրագրի իրականացման նշանակալի մասն ուղղվում է Երեւան քաղաքից դուրս՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, հատկապես հեռավոր ու սահմանամերձ բնակավայրերում գործող եւ սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին աջակցության ցուցաբերմանը:

Հոդված 8. ՓՄՁ աջակցության եւ զարգացման հարցերով պետական իշխանության մարմինների իրավասությունները

ՓՄՁ սուբյեկտների զարգացմանն ուղղված՝ պետական իշխանության մարմինների իրավասություններն են՝

1. ՓՄՁ զարգացման ոլորտում պետական քաղաքականության ձեւավորումն ու իրականացումը.

2. ՓՄՁ սուբյեկտների աջակցության սկզբունքների, ձեւերի եւ տեսակների առաջնային ուղղությունների որոշումը.

3. ՓՄՁ զարգացման պետական ծրագրերի մշակումը եւ իրականացումը.

4. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների հիման վրա ՓՄՁ սուբյեկտների զարգացման ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ հիմնական ցուցանիշների, ինչպես նաեւ ՓՄՁ սուբյեկտների աջակցության ենթակառուցվածքների ձեւավորումը, կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի իրականացումը.

5. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ձեռնարկատիրական գործունեության քարոզչությունը եւ հանրայնացումը.

6. ՓՄՁ սուբյեկտների զարգացման տարածքային ծրագրերի աջակցությունը.

7. ՓՄՁ զարգացման ոլորտում օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների եւ կազմակերպությունների հետ համագործակցությունը, միջազգային կազմակերպություններում ներկայացուցչությունը.

8. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցությունը, ներառյալ սուբսիդավորումը եւ վարկային տոկոսների կամ դրանց մի մասի փոխհատուցումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

Հոդված 9. Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացման հարցերով տարածքային կառավարման մարմինների լիազորությունները

ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցերով տարածքային կառավարման մարմինների լիազորություններն են՝

1. ՓՄՁ զարգացման ոլորտում պետական քաղաքականության ներդրումն ու իրականացումը համապատասխան վարչական տարածքում.

2. ՓՄՁ սուբյեկտների միջեւ միջմարզային համագործակցության զարգացման աջակցությունը.

3. ձեռնարկատիրական գործունեության քարոզումը եւ հանրայնացումը համապատասխան վարչական տարածքում.

4. ՓՄՁ զարգացման հարցերով միջազգային կազմակերպությունների ու վարչատարածքային կառույցների հետ համագործակցությունը.

5. ՓՄՁ ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ ցուցանիշների ու դրանց զարգացման միջոցառումների արդյունավետության վերլուծությունը.

6. մարզերում ՓՄՁ զարգացման կանխատեսումները.

7. մարզերում ՓՄՁ սուբյեկտների աջակցության ենթակառուցվածքների ձեւավորումը եւ դրանց գործունեության ապահովումը.

8. ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական, խորհրդատվական աջակցության կազմակերպումը.

9.արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող ՓՄՁ սուբյեկտներին աջակցության տրամադրումը:

Հոդված 10. Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների զարգացման հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն են՝

1. ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ ցուցանիշների, դրանց զարգացման միջոցառումների արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաեւ համայնքներում ՓՄՁ զարգացման կանխատեսումները.

2. համայնքներում ՓՄՁ սուբյեկտների աջակցության ենթակառուցվածքների կազմավորումն ու դրանց գործունեության ապահովումը.

3. ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական, իրավաբանական, խորհրդատվական, մարքեթինգային եւ այլ մեթոդական բնույթի աջակցության կազմակերպումը, ինչպես նաեւ արտահանման կարողությունների ավելացման ապահովումը:

Հոդված 11. Եզրափակիչ մաս

Եթե Հայաստանի Հանրապետության անունից կնքված եւ վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 12. Անցումային դրույթներ

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից, ուժը կորցրած ճանաչել «Փոքր եւ միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի N ՀՕ-121 օրենքը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՓՈՔՐ ԵՒ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման եւ պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, գործազրկության եւ աղքատության մակարդակի նվազման եւ այլ կարեւորագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

2. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.

Սույն օրենքի նախագծում սահմանված են փոքր ու միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) զարգացման ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները՝ համախառն ներքին արդյունքի ծավալում ՓՄՁ սուբյեկտների արտադրած ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) բաժնեմասի ավելացումը, արտահանման կառուցվածքում ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի կամ ծառայությունների մասնաբաժնի մեծացումը, ՓՄՁ սուբյեկտների մրցունակության ապահովումը, պետական ռեգիստրում գրանցված եւ գործող կազմակերպությունների թվի մեջ ՓՄՁ սուբյեկտների տեսակարար կշռի ավելացումը, բնակչության զբաղվածության ապահովումը, ինքնազբաղվածության զարգացումը եւ այլն:

Նախագծում սահմանված են ՓՄՁ-ի պետական աջակցության հիմնական ուղղությունները՝ իրավական բարենպաստ դաշտի ձեւավորումը, ֆինանսական եւ ներդրումային աջակցությունը, երաշխիքների տրամադրումը, աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը նպաստելը, տեղեկատվական եւ խորհրդատվական օգնությունը, արտաքին տնտեսական գործունեության խթանումը, բարենպաստ հարկային քաղաքականության իրականացումը:

«Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման եւ պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի անկյունաքարը հանդիսանում է ՓՄՁ աջակցության պետական ծրագրի ֆինանսավորման նվազագույն շեմի սահմանումը՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 0.5 տոկոսի չափով, ինչպես նաեւ ՓՄՁ սուբյեկտների զարգացմանն ուղղված պետական կառավարման, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունների ամրագրումը օրենքով:

ՓՄՁ աջակցության պետական ծրագրի ֆինանսավորման նվազագույն շեմի՝ ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի առնվազն 0.5 տոկոսի չափով ամրագրումը ապահովում է ՓՄՁ պետական օժանդակության եւ աջակցության ծախսերի համարժեքությունը ընդհանուր բյուջետային ծախսերին: Վերջինս ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ավելացմանը զուգահեռ ՓՄՁ աջակցության ֆինանսավորման տարեցտարի ավելացում: Նախագծում ամրագրվում են ՓՄՁ սուբյեկտների զարգացմանն ուղղված պետական կառավարման, տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները:

Մասնավորապես՝ պետական կառավարման մարմինների իրավասություններն են՝ ՓՄՁ զարգացման ոլորտում պետական քաղաքականության ձեւավորումն ու իրականացումը, ՓՄՁ սուբյեկտների աջակցության սկզբունքների, ձեւերի եւ տեսակների առաջնային ուղղությունների որոշումը, ՓՄՁ զարգացման պետական ծրագրերի մշակումն ու իրականացումը, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կանխատեսումների հիման վրա ՓՄՁ սուբյեկտների զարգացման ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ հիմնական ցուցանիշների, ինչպես նաեւ ՓՄՁ սուբյեկտների աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ձեւավորումը, պետական բյուջեի միջոցների հաշվին ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցությունը, ներառյալ սուբսիդավորումը եւ վարկային տոկոսների կամ դրանց մի մասի փոխհատուցումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով եւ չափով:

ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցերով տարածքային կառավարման մարմիններին նախագծում վերապահված են հետեւյալ լիազորությունները՝ ՓՄՁ զարգացման ոլորտում պետական քաղաքականության ներդրումն ու իրականացումը համապատասխան վարչական տարածքում, ՓՄՁ սուբյեկտների միջեւ միջմարզային համագործակցության զարգացման աջակցությունը, ձեռնարկատիրական գործունեության քարոզումը եւ հանրայնացումը, մարզերում ՓՄՁ զարգացման կանխատեսումները, ՓՄՁ սուբյեկտներին տեղեկատվական, խորհրդատվական աջակցության կազմակերպումը:

Նախագծում ՓՄՁ սուբյեկտների զարգացման հարցերով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները վերաբերում են հիմնականում ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական, տնտեսական, սոցիալական եւ այլ ցուցանիշների, դրանց զարգացման միջոցառումների արդյունավետության վերլուծությանը, համայնքներում ՓՄՁ սուբյեկտների աջակցության ենթակառուցվածքների կազմավորմանն ու դրանց գործունեության ապահովմանը, ՓՄՁ սուբյեկտների տեղեկատվական, իրավաբանական, խորհրդատվական, մարքեթինգային եւ այլ մեթոդական բնույթի աջակցության կազմակերպմանը, ինչպես նաեւ արտահանման կարողությունների ավելացման ապահովմանը:

«Փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացման եւ պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունմամբ է պայմանավորված ՓՄՁ հզորացման, կայուն ու անկախ տնտեսություն ունենալու եւ դրանից բխող պետական այլ ծրագրերի իրականացումը:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները եւ անձինք. Նախագիծը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյանի, Նաիրա Զոհրաբյանի, Վահե Հովհաննիսյանի, Էլինար Վարդանյանի կողմից՝ մասնագետ-փորձագետների մասնակցությամբ: